

# «ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ»

Փակ բաժնետիրական ընկերություն

---

Ցեմենտի աղացման արտադրամասի N3 և N4  
ցեմենտի գնդաղացների կառուցման նախագծի

*ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ*

Կատարող  
Ա/Ձ Ա. Գալոյան

2024

---

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	3
1.1. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը.....	3
2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	3
2.1. Ազգային իրավական ակտեր.....	3
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ .....	9
3.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները.....	9
3.2 Տարածքի սեյսմիկ բնութագիրը .....	11
3.3 Կլիմայական պայմանները .....	12
3.4 Օդային ավազան.....	15
3.5 Ջրային ռեսուրսներ.....	18
3.6 Հողածածկ.....	21
3.7 Կենսաբազմազանություն.....	22
3.7.1 Բուսական աշխարհ.....	22
3.7.2 Կենդանական աշխարհ.....	22
3.8 Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ .....	23
3.9 Պատամամշակութային հուշարձաններ և բնության հուշարձաններ .....	24
3.10 Սոցիալական պայմանները.....	25
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ .....	25
4.1. Ընդհանուր տեղեկատվություն.....	25
4.2 Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ.....	33
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....	35
5.1 Օդային ավազան.....	36
5.2 Ջրային ռեսուրսներ.....	36
5.3 Հողային ռեսուրսներ .....	36
5.4 Թափոններ .....	37
5.5 Կենսաբազմազանություն.....	37
5.6 Աղմուկ և վիբրացիա .....	37
5.7 Սանիտարապաշտպան գոտի.....	37
5.8 Աշխատանքի անվտանգություն.....	38
6. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ /ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ/ ԾՐԱԳԻՐ .....	38
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ ...	40

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը

### Ձեռնարկողի անվանումը՝

«ԱՐԱՐԱՍՑԵՄԵՆՏ» փակ բաժնետիրական ընկերություն:

«Արարատցեմենտ» ՓԲԸ Հայաստանում պորտլանդցեմենտ արտադրող երկու ընկերությունից մեկն է:

Գործարանը հիմնադրվել է 1927 թվականին: Իր առաջին արտադրանքը տվել է 1933 թվականին:

### Ձեռնարկողի գործունեության վայրը՝

Իրավաբանական հասցե՝ Արարատի մարզ, Արարատ համայնք, քաղաք Արարատ, Շահումյան փող. 5:

Գործունեության հասցե՝ Արարատի մարզ, Արարատ համայնք, քաղաք Արարատ, Շահումյան փող. 5:

Տարածքում գործում է ընկերության ցեմենտի գործարանը:

# 2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

## 2.1. Ազգային իրավական ակտեր

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Նախատեսվող գործունեության իրականացման համար անհրաժեշտ է առաջնորդվել բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք

ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Բնապահպանական և քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

**ՀՀ Սահմանադրություն** (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը** (21.06.2014թ.), վերջին փոփոխությունը ընդունվել է 2023թ.

- Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

**«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք** (ընդունված 1994թ., վերջին փոփոխությունը՝ 2022թ.): Սույն օրենքը կարգավորում է՝

1) մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական

հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը.

2) մարդու առողջության եւ շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

**«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)** - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

#### **«ՀՀ ջրային օրենսգիրք»**

Ջրօգտագործման, ջրահեռացման, մակերեսային և ստորգետնյա ավազանների օգտագործման և պահպանության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով (ընդունված 04.06.2002) և Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքով:

ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը սահմանվել են ՀՀ կառավարության 27.01.2011 թ. N 75 - Ն որոշմամբ հաստատված “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմեր”-ով:

#### **«ՀՀ բուսական աշխարհի մասին օրենք»**

ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում սահմանում է “Բուսական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 23.11.1999 թ.):

#### **«ՀՀ կենդանական աշխարհի մասին օրենք»**

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանում է “Կենդանական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 03.04.2000 թ.):

**«ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք»**

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները կարգավորում է “Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին” ՀՀ օրենքը (ընդունված 27.11.2006 թ.):

**«Հողերի օգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը** (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

**«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)** - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները:

**«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005)** -

կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

- «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 72-Ն որոշում,
- «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 71-Ն որոշում,
- ՀՀ կառավարության 08.02.2018թ. N108-Ն որոշում,
- «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967- Ն որոշում,
- ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:
- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մարտի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման

տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”

- 11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիրաջիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”:

**ՀՀ Կառավարության թիվ 64-Ն որոշում** - «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին»



3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ  
ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

**3.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները**

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Արարատի մարզի Արարատ քաղաքում:

Մարզի մակերևույթը բարդ է: Նրա հյուսիսային ու արևմտյան մասերը զբաղեցնում է Արարատյան գոգավորության մերձարաքայան դեպի արևելք թույլ թեքված տափարակ հարթավայրը և Գեղամա լեռների ճյուղավորությունների նախալեռները: Իսկ արևելյան ու հարավային մասերը՝ Գեղամա լեռնավահանը և նրա վերջավորությունները:

Արարատ քաղաքը տեղակայված է Երևան-Նախիջևան ճանապարհի վրա:

Աշխարհագրական առումով քաղաքը տեղակայված է Միջինարաքայան գոգավորությունում, ծովի մակարդակից 818 մ բարձրության վրա:

Քաղաքը գտնվում է Երևանից 47 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից ունի 19 կմ հեռավորություն: Մոտակա բնակելի տունը գտնվում է մոտավորապես՝ 2.2 կմ հեռավորության վրա:






*Նկար 1. Քարտեզ սխեմա*



### 3.2 Տարածքի սեյսմիկ բնութագիրը




Համաձայն 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված՝ ՀՀՇՆ II-20.04.2020թ. Երկրաշարժադինացկուն շինարարություն. Նախագծման նորմերի սահմանված են չափանիշներ, համաձայն որի, ըստ ուժգնության աճող հաջորդականության առկա են՝ 1, 2, 3 սեյսմիկ գոտիներ, որոնց համար գրունտի հորիզոնական արագացման մեծությունը համապատասխանաբար՝ 300, 400 և 500 սմ/վրկ<sup>2</sup> է: Նույն հրամանի հավելվածում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը ըստ սեյսմիկ գոտիների: Նախատեսվող գործունեության տարածքը և մոտակա բնակավայրերը գտնվում են 1-ին սեյսմիկ գոտում: Հայցվող տարածքին վերագրվում է գրունտի հորիզոնական արագացում՝  $a=300$  սմ/վրկ<sup>2</sup>,  $A=0.3g$ :

Նկար 2. ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ



#### ՄԵՅՍՄԻԿ ԳՈՏԻՆԵՐ

Գրունտի սպասվելիք արագացումների մեծություններով՝  
 A, ազատ անկման g արագացման մասերով

-  1  $A=0,3g$
-  2  $A=0,4g$
-  3  $A=0,5g$

### 3.3 Կլիմայական պայմանները

Արարատի մարզի կլիման չոր խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -3-ից -5 աստիճան: Նվազագույն ջերմաստիճանը դիտվել է -32 աստիճան: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից 26 աստիճան, իսկ առավելագույնը՝ 42 աստիճան: Հաճախ լինում են խորշակներ, որնք զգալի փասս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 200-250մմ է:

Կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և համապատասխան կլիմայական ցուցանիշները:

Աղյուսակ 3.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերև- ութաբ. կայանը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարե- կան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելա- գույն
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արարատ	-3.1	0.2	6.9	13.4	18.1	22.6	26.4	26.0	21.1	13.8	6.2	0.0	12.6	-31.6	42.6

Աղյուսակ 3.2. Օդի հարաբերական խոնավությունը

Օդերև- ութաբ. կայանը	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		Միջին ամսական	Միջին ամսական ժ. 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական ժ. 15-ին

Աղյուսակ 3.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ	
	Ըստ ամիսների														Տարեկան
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արարատ	17	18	24	36	36	21	10	7	8	18	21	17	233	97	136
	26	34	26	31	34	37	20	31	28	32	35	28	37		

Աղյուսակ 3.4. Քանու պարամետրերը

Բնակավայրի, օրերնութաբանական կայանի անվանումը	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անոթորրի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող արագությունը հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող արագությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Արարատ	Հունվար	16	3	8	18	10	5	11	29	50	1.3	Հս	2,6	ՀվԱրլ	2,7
		1.9	1.6	1.7	2.7	2.1	1.5	1.9	2.2						
	Ապրիլ	13	4	8	29	15	5	8	18	28	2.3				
		2.7	2.3	2.7	3.4	2.8	2.7	2.4	2.8						
	Հուլիս	18	3	6	14	12	5	10	32	23	2.3				
		2,6	2.7	2.2	2.7	2.2	2.1	2.6	3.0						
	Հոկտեմբեր	17	3	8	18	13	4	11	26	39	1.5				
		2.3	1.8	1.7	2.3	2.0	1.9	2.1	2.5						

### 3.4 Օդային ավազան

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

Տարածաշրջանում օդային ավազանի աղտոտման հիմնական աղբյուրներն են՝ ավտոտրանսպորտը, ցուրտ եղանակին ջեռուցման համակարգերը, արդյունաբերական ձեռնարկություններ:


Համայնքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներն են հանդիսանում քաղաքաշինության և արդյունաբերության ոլորտները:

Ինչպես արդեն նշվել է մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածությունը հանրապետության տարածքում վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:


2023 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Համաձայն իրականացված արդյունքների 2023 թվականին 2022 թվականի համեմատությամբ Երևան, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Չարենցավան, Ծաղկաձոր քաղաքների մթնոլորտային օդում բարձրացել է ծծմբի երկօքսիդի պարունակությունը: Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Արարատ, Քաջարան, Ծաղկաձոր քաղաքների մթնոլորտային օդում բարձրացել է ազոտի երկօքսիդի պարունակությունը: Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր քաղաքների մթնոլորտային օդում բարձրացել է փոշու պարունակությունը:

Արարատ քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է 12 դիտակետ և 1 դիտակայան: 2023 թվականին Արարատ քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիանները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Տարվա ընթացքում փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն 1.1-5.2 անգամ (109 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան ( $0.774\text{մգ/մ}^3$ ) դիտվել է մարտի 7-ին: Իրականացված դիտարկումների 31%-ում դիտվել է փոշու, 4%-ում՝ ծծմբի երկօքսիդի և 4%-ում՝ ազոտի երկօքսիդի գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ներից: Նախորդ տարվա համեմատությամբ փոշու կոնցենտրացիան աճել է 49%-ով, ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիան՝ 24%-ով, ազոտի երկօքսիդի կոնցենտրացիան՝ 12%-ով: Քաղաքի մթնոլորտի

աղտոտվածության ցուցանիշը (ըստ մթնոլորտն աղտոտող 3 նյութերի) միջինից ցածր մակարդակի է՝ 2.45 (փոշի՝ 1.44, ծծմբի երկօքսիդ՝ 0.53, ազոտի երկօքսիդ՝ 0.49): Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է փոշու և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների աճման, ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիայի՝ նվազման տենդենց: Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուր է հանդիսանում արդյունաբերությունը:




Նկար 3. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիայի փոփոխությունները 2023 թ.




Նկար 4. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները





Նկար 5. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Նկար 7. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Աղյուսակ 3.5. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին տարեկան կոնցենտրացիայի (մգ/մ<sup>3</sup>) փոփոխությունները, 2019 – 2023 թ.թ.

Նյութի անվանում	Բնութագրիչ	2019	2020	2021	2022	2023	Տեղեկեց
Փոշի	Միջին տարեկան կոնցենտրացիա	0.125	0.083	0.099	0.097	0.144	0.005
	Փորձանմուշների քանակ	355	338	357	354	351	-
Ծծմբի երկօքսիդ	Միջին տարեկան կոնցենտրացիա	0.029	0.027	0.028	0.021	0.026	-0.001
	Փորձանմուշների քանակ	604	549	611	615	635	-
Ազոտի երկօքսիդ	Միջին տարեկան կոնցենտրացիա	0.013	0.016	0.016	0.021	0.023	0.003
	Փորձանմուշների քանակ	603	551	622	622	635	

### 3.5 Ջրային ռեսուրսներ

Տարածաշրջանի հիմնական ջրային զարկերակը Վեդի գետն է:

Վեդին գետ է Հայաստանի Արարատի մարզում՝ Արաքսի ձախակողմյան վտակն է: Սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայի ծայր հարավում ընկած Մանկունք լեռնագագաթի հարավարևելյան լանջերի՝ մոտ 2700 մ բարձրություններից: Հոսքի ընդհանուր ուղղությունը հարավարևմտյան է: Վերին հոսանքում գետն ունի լեռնային բնույթ: Ստորին հոսանքում անցնում է Արարատյան հարթավայրով ու թափվում գետը, Եղեգնավան գյուղից մոտ 2 կմ հարավ՝ ծովի մակարդակից մոտ 810 մ բարձրության վրա: Վեդիի երկարությունը 58 կմ է, ջրահավաք ավազանի մակերեսը 633 կմ<sup>2</sup>, որի մի մասը մտնում է Խոսրովի անտառ արգելոցի մեջ: Խոշոր վտակներից են Մանկունքը, Սպիտակաջուր, Խոսրովը, Շաղափը ու Կոտուցը (Կետուզայ) (վտակները ներկայացված են ըստ Վեդիի մեջ թափվելու հերթականության):

Ջրի միջին տարեկան ծախսը մոտ 2,3 մ<sup>3</sup>/վրկ է, հոսքը՝ մոտ 72 միլիոն մ<sup>3</sup>: Մտնումը հիմնականում հալոցքային (47%), ստորերկրյա (42%) ու անձրևային է: Հորդանում է մարտից մինչև հունիս, որի ընթացքում ձևավորվում է տարեկան հոսքի 70%-ը: Ջուրը օգտագործվում է գյուղատնտեսական նպատակներով: Սակավաջուր տարիներին ու ռոռգման շրջանում գետը հաճախ Արաքսին չի հասնում<sup>1</sup>:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

ՀՀ կառավարության կողմից՝ «Կախված տեղանքի առանձնահատկություններից, յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 Ն որոշում): ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների

<sup>1</sup> <https://hy.wikipedia.org/>

(գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական՝ մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ:

2022 թվականի /վերջին տարեկան ամփոփագիր/ տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 39%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 18%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 33%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):

*Արարատյան ջրավազանային կառավարման տարածք (ՋԿՏ)*

Վեղի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Արարատ քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված նիտրիտ իոնով, մանգանով և ալյումինով:


Համաձայն 2023 թ. IV եռամսյակի ամփոփագրի ՋԿՏ գետերի տվյալները բերված են ստորև.

Աղյուսակ 3.6. Արարատյան ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր. մ <sup>3</sup> /վրկ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաս-տացի	նորմա	%	փաս-տացի	նորմա	%	փաս-տացի	նորմա	%
Ազատ	Գառնի	1.85	2.95	63	1.61	3.07	52	1.59	3.04	52
Վեղի	Ուրցաձոր	0.25	0.51	49	0.29	0.72	40	0.45	0.72	63
Արփա	Ջերմուկ	2.88	2.75	105	2.84	2.66	107	2.58	2.58	100
Արփա	Արենի	4.93	7.30	67	5.57	8.11	69	5.91	7.55	78

Նկար 8.

**ՀՀ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2022 թվական**




### 3.6 Հողածածկ

Նախատեսվող գործունեության տարածքում հիմնականում զերակշռում են ոռոգելի մարգագետնային գորշ, մեծ մասամբ խորքային ալկալիացած աղակալած հողային տիպերը:

Տարածաշրջանում հողերի էրոզվածության աստիճանը 6-րդ կարգի է (70-ից ավել %):

Աղուտ-ալկալի տարածքները բնութագրվում են զգալի կարբոնացմամբ, հումուսի ցածր պարունակությամբ, բարձր հիմնայնությամբ, միջին կամ ծանր մեխանիկական կազմով և պրոֆիլի երկայնքով մանր ֆրակցիաների անհավասար բաշխմամբ:

Ներկայացվող տարածքում հողային ծածկույթն արդեն իսկ խախտված է, նախկինում տեխնածին ազդեցություններից, քանի որ տարածքն ամբողջովին օգտագործվել է արտադրական նպատակով: Ներկայացվող տարածքում բաց հողային մակերես կամ բուսաշերտ պարունակող տարածքները բացակայում են:



Նկար 5. Հողածածկի բնութագիրը



### 3.7 Կենսաբազմազանություն

Արարատ քաղաքի և դրա մերձավոր տարածքների կենսաբազմազանությունը ձևավորվել է ինչպես սեփական աշխարհագրական դիրքի, բնակլիմայական, ռելիեֆային և լանդշաֆտային պայմանների, այնպես էլ մերձավոր տարածքների ֆլորիստական շրջանների բուսական և կենդանական աշխարհների ազդեցության ներքո:

#### 3.7.1 Բուսական աշխարհ

Տարածքը իրենից ներկայացվում է կիսաանապատային չոր բուսականությամբ: Բուսականության հիմնական ֆոնը օշինդրային և հազարատերևուկային կիսաանապատային համակեցությունն է՝ Օշինդր բուրավետ (*Artemisia fragrans*) և Հազարատերևուկ նեղատերև (*Achillea tenuifolia*):

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանի սահմանում: Բացի ֆոնային տեսակներից, բնական կիսաանապատային բուսականությունը հարուստ է բարդածաղկավորների այլ տեսակներով *Helichrysum armenium* - Անթառամ հայկական, *Xeranthemum squarrosum* - Անմեռուկ չոված, *Chondrilla juncea* - Խիժաճարճատուկ կնյունանման և այլն), հացազգիների ընտանիքին պատկանող տեսակների մեծ քանակով (*Aegilops cylindrica* - Այծակն գլանաձև, *Bromus japonica* - Յորնուկ ճապոնական, *Taeniatherum crinitum* - Երիզաքիստ երկարամազ, *Poa bulbosa* - Դաշտավլուկ սոխուկավոր), Խաչածաղկավորներին պատկանող *Lepidium vesicarium* - Կոտեմ բշտիկավոր տեսակով և այլն:

Համաձայն ՀՀ բույսերի Կարմիր գրքի տվյալների, տարածաշրջանում գրանցված են մի շարք բուսատեսակներ, մասնավորապես՝ Օշան Օշեի (*Salsola aucheri*), Օշան Թամամշյանի (*Salsola tamamschjanae*), Օշան թաղիքային *Salsola tomentosa*), Տանձենի Ֆյոդորովի (*Pyrus theodorovi* Mulk), Խոնդատ մերկացողուն (*Verbascum nudicaule*), Կարմրան ութառեղ (*Tamarix octandra*), Վարդատերեփուկ Իլլինի (*Amberboa iljiniana* Grossh):

Անմիջապես ներկայացվող տարածքում նշված բուսատեսակներից որևի մեկի վերաբերյալ տվյալներ չկան:

#### 3.7.2 Կենդանական աշխարհ

Տարածքում կենդանական աշխարհը ներկայացված է սակավաթիվ տեսակներով: Հանրապետության տարածքում լայնորեն տարածված ռեսակներից կարող են հանդիպել երկկենցաղներից Փոփոխական դողոշը (*Bufo variabilis*), որը նախկինում հայտնի էր Կանաչ դողոշ անունով: Այս տարածքում հանդիպող

հավանական տեսակներից է նաև՝ Փոքրասիական ճագարամուկը (*Allactaga williamsi* Thomas), Անդրկովկասյան կուրամկնիկ (*Ellobius lutescens* Thomas), Պարսկական ավազամուկ (*Meriones persicus*):

Տարածքում հանդիպում են նաև սողուններ (Շտրաուսի մողեսիկ-*Eremias strauchi* Kessler), թռչուններ (Կապույտ քարակեռնեխ - *Monticola solitarius*, Սևախայտ քարաթռչնակ - *Oenanthe hispanica*, Տնային ճնճղուկ - *Passer domesticus*), կաթնասուններ (Գորշ նապաստակ - *Lepus europaeus* Pallas, Թփուտային դաշտամուկ - *Microtus majori*, Սովորական աղվես - *Vulpes vulpes*):

Պետք է նաև փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, տարածքն ամբողջությամբ արտադրական տարածք է, ինչի պարագայում բնական բուսածածկ, հողածածկ, վայրի կենդանիներ կամ դրանց ապրելավայրեր չկան:

### **3.8 Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Դիտարկվող տարածքը չի առնչվում բնապահպանական տեսանկյունից խոցելի, կամ բնության հատուկ պահպանվող տարածքների հետ: Արտադրական գործունեությունը կազմակերպելու համար օգտագործվելու են գոյություն ունեցող ենթակառուցվածքները, հետևաբար բնական լանդշաֆտների վրա հնարավոր ազդեցությունները բացակայում են:

Տարածաշրջանի բնական էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումը ապահովելու նպատակով տարբեր ժամանակահատվածներում շրջակա տարածքներում կազմակերպվել են մի շարք բնության հատուկ պահպանվող տարածքներ. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N 1059 որոշման, ՀՀ Արարատի մարզում գտնվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, «Գոռավանի ավազուտներ» և «Խոր վիրապ» պետական արգելավայրերը:

Ստորև ներկայացվում է հատուկ պահպանվող տարածքների սխեմատիկ քարտեզը:

Նշված պահպանվող տարածքները նախատեսվող աշխատանքների իրականացման վայրից գտնվում են զգալի հեռավորության վրա և որևէ ազդեցության չեն ենթարկվի սույն գերծունեության արդյունքում: Ամենամոտը «Գոռավանի ավազուտներ» արգելավայրն է, որը գտնվում է ավելի քան 3 կմ հեռավորության վրա:

### 3.9 Պատմամշակութային հուշարձաններ և բնության հուշարձաններ

Նախատեսվող արտադրական գործունեությունը ծավալվելու է Արարատ համայնքի վարչական տարածքում, որտեղ արտադրական հանգույցի անմիջական հարևանությամբ, կամ հարակից տարածքներում բացակայում են բնակելի թաղամասերը, մշակվող հողատարածքները, պատմամշակութային կամ բնության հուշարձանները:

Այնուամենայնիվ, որպես օրենսդրական պահանջ՝ ստորև ներկայացվում է Արարատի տարածաշրջանում գրանցված բնության և պատմամշակութային հուշարձանների ցանկը:

ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը, համաձայն որի տարածաշրջանում հաշվառված հետևյալ բնության հուշարձաններից որևէ մեկը չի առնչվում գործունեության տարածքի հետ:

#### *Երկրաբանական հուշարձաններ*

1.	«Անձավիկ» քարանձավ	Արարատի մարզ, Վեդի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտուակունք գետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 08 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա
2.	«Դաշտաքար» քարանձավ	Արարատի մարզ, Դաշտաքար գյուղից 02 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400 մ բարձրության վրա
3.	«Խոր հոր» անձավային համակարգ	Արարատի մարզ, Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա
4.	«Անանուն» շերտավոր նստվածքներ	Արարատի մարզ, Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա
5.	«Անանուն» անտիկլինալ ծալք	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
6.	«Անանուն» ծալքավոր ստրուկտուրա	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
7.	«Անանուն» ծալքագոյացման մերկացում	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեդի գետի աջ ափին
8.	«Հորթունի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ
9.	«Ջերմանիսի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Ջերմանիս գյուղատեղիի մոտակայքում
10.	«Վեդի գետի ավազանի» բրածո ֆաունա	Արարատի մարզ, Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ

#### *Կենսաբանական հուշարձաններ*

1.	«Աղակալած ճահճուտ»	Արարատի մարզ, քաղ. Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության վրա
----	--------------------	---



### 3.10 Սոցիալական պայմանները

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Արարատ համայնքի Արարատ քաղաքում: Քաղաքը գտնվում է Երևանից 47 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից ունի 19 կմ հեռավորություն:

#### *Արարատ քաղաք*

*Մակերես՝ 27.69կմ<sup>2</sup>*

*Բնակչություն՝ 20.5 հազ. մարդ*

Արարատ քաղաքը գտնվում է Երևան-Նախիջևան ճանապարհի վրա, Երևան քաղաքից մոտ 47 կմ հարավ-արևելք: Մարզկենտրոնից ունի 19 կմ հեռավորություն:

Ունի օգտակար հանածոներ, դրանցից առավել նշանավոր են մոտակա Մալակիթ լեռան կրաքարը: Շրջակայքում կան կվարցի և օնիքսային սև մարմարի պաշարներ, որի մշակումից ստացվում է դեկորատիվ սալիկներ: Քաղաքի մոտ է գտնվում հիդրոկարբոնատակալցիումային հանքային բուժիչ ջուրը: Ունի դպրոցներ, գրադարաններ, մանկապարտեզներ, երաժշտական դպրոց, հիվանդանոց, պոլիկլինիկա, կապի հանգույց:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ իր գերակշիռ տեղն ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ցեմենտի, կրի և ասբոցեմենտային իրերի արտադրությունը):

Ունի զարգացած գյուղատնտեսություն: Այստեղ գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն խաղողի, պտղատու այգիները, վարելահողերը: Զբաղվում են պտղաբուծությամբ, խաղողագործությամբ, բանջարաբուծությամբ, ինչպես նաև կաթնամսատու ուղղության անասնապահությամբ, թռչնաբուծությամբ:

## 4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

### 4.1. Ընդհանուր տեղեկատվություն

«Արարատցեմենտ» ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասի մակերեսը կազմում է 454,5494 հա:

Նպատակային նշանակությունը՝ արտադրական,

Օգտագործման նպատակը՝ արտադրական օբյեկտների;

Իրավունքի տեսակը՝ վարձակալություն:

Շենքի տվյալները՝

Նպատակային նշանակությունը՝ արտադրական;

Օգտագործման նպատակը՝ վարչական շենք – 3325,1 քմ;


Իրավունքի տեսակը սեփականություն:

«Արարատցեմենտ» ընկերությունը նախատեսում է ցեմենտի աղացման արտադրամասում կառուցել N3 և N4 ցեմենտի գնդաղացները: Ընկերության արտադրողականությունը չի փոխվելու՝ 1200000տ ցեմենտ տարի:

Համալրման նպատակով նախատեսվում ձեռք բերել և տեղադրել ջարդիչ կայանք, որը բաղկացած կլինի երկու հոսքագծից:

Նոր տեղամասում նախատեսվում է՝


1. Հավելանյութերի արտադրամաս
2. Մեխանիկական վերանորոգման արտադրամաս
3. Ավտոպարկ
4. Ենթակայան
5. Կենտրոնական ղեկավարման ապարատ
6. Լաբորատորիայի մասնաշենք
7. Ցեմենտի պահեստ
8. Սարքավորումների պահեստ
9. Դեպո
10. Գլխավոր էլ. ենթակայան



Նկար 4. Գլխավոր հատակագիծ



## Գործարանի տարածքի գլխավոր հատակագիծ




Կանաչով նշված կանաչապատ տարածքներ

Նոր կանաչապատվող տարածք


- |                                       |                                 |                                  |   |
|---------------------------------------|---------------------------------|----------------------------------|---|
| 1 Դուրբի նախապատրաստման արտադրամաս    | 9 Վեր. մոնտ. արտադրամաս         | 16 Կաթսայատուն                   | 23 Ցեմենտի աղացման արտադրամաս           |
| 2 Դուրբալ յուրի պատրաստման արտադրամաս | 10 Էլ-վերանորոգման արտադրամաս   | 17 Զրակայուն պահեստ              | 23/1 Ցեմ աղաց. արտ. նոր կառուց. տեղամաս |
| 3 Փոշեղորման արտադրամաս               | 11 Զրշեջ ծառայություն           | 18 Վառելիքի և քսանյութերի պահեստ | 24 Գլ. նվազեցնող Ենթակայան              |
| 4 Ավտոտրանսպորտի արտադրամաս           | 12 ԶՅԱ արտադրամաս               | 19 Կապի ծառայություն             | 25 Սարքավորումների և նյութեր պահեստ     |
| 5 Ցանց և ենթակայաններ                 | 13 Կենտրոնական լաբորատորիա      | 20 Երկաթուղային տրանսպորտ        | 26 Շին. վերանորոգման արտադրամաս         |
| 6 Լաբորատորիա «ԱԷՍ»                   | 14 Դավելանյութ. պատ. արտադրամաս | 21 Տնտեսական արտադրամաս          | 27 Մեխ. վերանորոգման արտադրամաս         |
| 7 «ԱԿԳ» արտադրամաս                    | 15 Ջրաճնշման արտադրամաս         | 22 Կիզման արտադրամաս             | 28 Փաթեթավորման արտադրամաս              |
| 8 Վերելակային տնտեսություն            |                                 |                                  |   |

**N3 և N4 Ցեմենտի Չեղաղացի Կառուցման Հատակագիծ**







**N3 և N4 Ցեմենտի Չկողացի Կառուցման Հատակագիծ**



**Ճակատ 1**



## Ճակատ 2





Նախատեսվող հանգույցը կառուցվելու է «Արարատցեմենտ» ՓԲԸ արտադրական տարածքում, նոր տարածներ չեն ներգրավվելու: Տարածքը ապահովված բոլոր ենթակառուցվածքներով: Գազամատակարարում, ջրամատակարարում և կոյուղի էլեկտրամատակարարում:

Նախատեսվող հանգույցի համար մակերեսը կազմելու է 9900 քմ (0.99 հա):

Նախատեսվում է իրականացնել նոր կանաչապատման աշխատանքեր 1500 քմ մակերեսով:

«Արարատցեմենտ» ՍՊԸ արտադրական տարածքը ապահովված է աշխատողների համար անհրաժեշտ սանիտարա-կենցաղային պայմաններով:

#### **4.2 Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ**

Հումքը տեղափոխվում է ջարդիչ կայանքի տարածք և բեռնվում է սնուցիչ բունկերի մեջ, որից փոխակրիչի միջոցով տրվում է ջարդիչների հանգույց:

Ընդամենը ցեմենտի արտադրության նախագծային արտադրողականությունը կազմում է 1.2 մլն.տ/տարի:

Ջարդիչ կայանքը համալրված է մաքրման համակարգով, որը բաղկացած է օդամղիչից, գոիչների հանգույցից և արտանետման խողովակից:

Չտիչները թևքային են, որոնց արդյունավետությունը հասնում է 98 տոկոսի:

Նոր նախատեսվող և ներկայում գործող ջարդիչ կայանքների ընդհանուր հզորությունը կազմում է 1.2 մլն.տ/տարի հումքի մանրացում:

Պորտլանդ ցեմենտի կլինկերի արտադրությունը չոր մեթոդով բաղկացած է հետևյալ տեխնոլոգիական գործընթացներից.

Կրաքարը և կավը նախապես մանրացվում, այնուհետև չորացվում են մինչև մոտավորապես 1% խոնավության պարունակություն: Չորացումը կատարվում է պտտվող թմբուկներում:

Հումքային խառնուրդ /ալյուր/ ստանալու նպատակով, սկսզբից հումքատեսակները լցվում են խառնիչներ, որից հետո պահանջվող քիմիական կազմ ապահովելու համար խառնուրդը տրվում է կարգաբերման սիլոսներ: Կարգաբերումը կատարվում է լրացուցիչ կրաքար ( $\text{CaCO}_3$ ) խառնելով: Սիլոսներում լրացուցիչ խառնում է կատարվում սեղմված օդի միջոցով:

Պատրաստված հումքի խառնուրդը տրվում է ցիկլոնային ջերմափոխանակիչների համակարգ, որը բաղկացած է ցիկլոնների մի քանի (սովորաբար չորս) աստիճաններից, որոնք կապված են մեկը մյուսի հետ, ինչպես նաև կարճ խողովակներով (40-70 մ)

միանում են թրծման պտտվող վառարանին: Հերթականորեն անցնելով բոլոր ցիկլոնների միջով, հումքային այլուրը տաքանում է հակադարձ ուղղությամբ հոսող վառարանի ծխագազերով:


Ցիկլոնային ջերմափոխանակիչներով հումքային խառնուրդի անցման ժամանակը չի գերազանցում 25-30 վրկ: Չնայած դրան, հումքային այլուրը ոչ միայն տաքանում է մինչև 700-800 C ջերմաստիճան, այլև ամբողջովին ջրազրկվում է և մասամբ ազատվում է (20-25%) ածխաթթու գազից: Ցիկլոններից հումքը մտնում է վառարան, որտեղ թրծման արդյունքում առաջանում է ցեմենտի կլինկեր:

Վառարանից կլինկերը տրվում է սառնարան, իսկ հովանալուց հետո ուղարկում կլինկերի պահեստ:

Կախված ցեմենտի տեսակից, մանրացված կլինկերը խառնվում է տարբեր լցոնիչների հետ:

Նախատեսվող վերակառուցումը չի պահանջելու արտադրական նպատակներով բնական ռեսուրսների նոր ծավալներ:

Ստորև բերված է տեխնոլոգիական սխեման:



5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ,  
ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ներկայացվող գործունեության հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերը կապված են.

- Օգտագործվող հումքի գործածության հետ /ընդունում, տեղափոխում, պահեստավորում, բեռնում/,
- Արտադրանքի ստացման ընթացքում ջարդիչների, խառնման բունկերների և աղաց հոսքագծերի փոշեառաջացման հետ,
- Հումքի և արտադրանքի տեղափոխության հետ, առաջացնելով ավտորանսպորտային երթևեկության ինտենսիվություն կամ ծանրաբեռնվածություն: Թվարկված ազդեցությունները նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք բերված են ստորև և ամփոփվել եննաև Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծրագրում

### **5.1 Օդային ավազան**

Արտադրական գործընթացում օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են`

- սորուն նյութերը պահեստավորել փակ պահեստում կամ ծածկի տակ
- բոլոր բունկերները կահավերտել ծածկով
- պարբերաբար իրականացնել բանվորական միջավայրի, տարածքի մոնիթորինգ և անհրաժեշտության դեպքում մթնոլորտային օդի աղտոտումը կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում, ենթարկվեն պլանային տեխնիկական ստուգումների:

### **5.2 Ջրային ռեսուրսներ**

Ջրային ռեսուրսների պահպանության համար նախատեսված են հետևյալ միջոցառումները

- հումքի պահեստավորումն իրականացնել այնպես, որպեսզի բացառվի դրանց շփումը անձրևաջրերի հետ,
- ապահովել արտադրամասի տարածքում անձրևաջրերի համար պարզարանի առկայությունը:

### **5.3 Հողային ռեսուրսներ**

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Հումիք ժամանակավոր պահման համար առանձնացնել հատուկ տարածք, որն ունենա բետոնապատ հատակ
- Ժամանակավոր պահման հատուկ տարածքը պետք է պաշտպանված լինի մթնոլորտային տեղումներից և այլ գործոնների ուղղակի ազդեցությունից՝ քամի, արևի ճառագայթներ և այլն:
- Սպասարկող անձնակազմը անցնում է համապատասխան դասընթաց և պարբերաբար հրահանգավորվում է հումքատեսակների ընդունման և պատշաճ կերպով պահեստավորման հարցերով:

#### **5.4 Թափոններ**

Նախատեսվող գործունեությանը թույլ է տալիս կազմակերպել անթափոն արտադրություն, քանի որ բոլոր ավելցուկները, կտորները նորից խառնվում է հումքի հետ և տրվում ջարդիչներ ու հետո աղացներ:

#### **5.5 Կենսաբազմազանություն**

Տարածքը գտնվում է արտադրական գոտում, որտեղ չկան վայրի կենդանիների ապրելավայրեր և բնական բուսականություն:

#### **5.6 Աղմուկ և վիբրացիա**

Աղմուկի աղբյուր կարելի է համարել աղացները և ջարդիչները: Սակայն այդ բոլոր սարքավորումների աղմուկի մակարդակը չպետք է գերազանցի ՀՀ-ում գործող սանիտարական նորմերը աշխատատեղերի համար, որը սահմանված է 80 դԲա:

#### **5.7 Սանիտարապաշտպան գոտի**

Համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04.01-2024 «ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ-ի «ցեմենտի (պորտլանդ-խարամապորտլանդ-պուցոլան-ցեմենտի և այլ տեսակի ցեմենտի), ինչպես նաև տեղական ցեմենտների (կավացեմենտի, ռոմանցեմենտի, գիպսախարամային և այլ տեղական ցեմենտների) արտադրություն»-ների համար սանիտարապաշտպանիչ

գոտիները (ՄՊԳ) սահմանված են 500 մ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի թաղամասերը գտնվում են անհամեմատ ավելի մեծ հեռավորության վրա (2120մ) իսկ անմիջական հարևանությամբ գտնվում են այլ արտադրական տարածքներ, հատուկ միջոցառումներ ՄՊԳ համար չեն նախատեսվում

### 5.8 Աշխատանքի անվտանգություն

Անձնակազմի համար աշխատանքի անվտանգության պահպանման համար նախատեսել վերահսկողություն, հրահանգավորում, ինչպես նաև պարբերաբար կազմակերպել արտադրական գործընթացի վերաբերյալ ուսուցողական դասընթացներ:

Կազմակերպել գործարանի տարածքում անձնակազմի առաջին օգնության և բուժապասարկման կետի առկայություն:

Աշխատողներին տրամադրել անձնական արտահագուստ և անհատական պաշտպանական միջոցներ:

Արտադրական տարածքն ապահովել անվտանգության նշաններով և ցուցադրական վահանակներով:

Ապահովել արտադրամասն առաջնային հրդեհաշիջման միջոցներով և այլ հակահրդեհային հանդերձանքով:

Արտադրական հանգույցում ապահովել հրդեհային անվտանգության պարագաների առկայությունը /կրակմարիչներ, բահեր և այլն/:

Անձնակազմի համար ապահովել հանգստի սենյակներ և սննդի ընդունման հնարավորություն:

## 6. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ /ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ/ ԾՐԱԳԻՐ

«Արարատցեմենտ» ընկերության կողմից նախատեսվող գործունեության տարածքներում մոնիթորինգի իրականացումը հնարավորություն կստեղծի ունենալ տեղեկատվական հենք՝ հսկելու ընկերության գործունեության հետագա շարունակական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ վնասակար ազդեցությունների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար:

Մոնիթորինգի իրականացման հիմնական նպատակն է ստեղծել տեղեկատվություն միջավայրի փոփոխությունների մասին:

Արտադրամասում պարբերաբար՝ ամիսը մեկ հաճախականությամբ նախատեսվում է իրականացնել տարածքի մոնիթորինգ փոշու պարունակությունը պարզելու համար:

Նախատեսվում է նաև նույն հաճախականությամբ իրականացնել աշխատատեղերում աղմուկի մակարդակի չափում:

Մոնիթորինգը նախատեսվում է կազմակերպել համապատասխանաբար սերտիֆիկացված սարքերի միջոցով, պայմանագրային հիմունքներով:

Անհրաժեշտ է նաև պարբերաբար իրականացնել ջարդիչ կայանքի մեխանիզմ-սարքավորումների աշխատանքների ստուգում, դրանց համապատասխանությունը տեխնիկական անձնագրերին պարզելու համար, և անհրաժեշտության դեպքում իրականացնել կարգաբերում:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Մոնիթորինգի միջոցառում	Արտաքին վերահսկողություն
<p>Արտադրամասի շահագործում</p>	<p>ա/ Մթնոլորտային օդի աղտոտում</p> <p>բ/ Ջրային ռեսուրսների պահպանություն</p> <p>դ/ Աշխատանքի անվտանգություն, աշխատանքային պայմաններ</p>	<p>Արտադրության համար անհրաժեշտ հումքը տեղափոխել ծածկված թափքերով տրանսպորտային միջոցներով Պարբերաբար ստուգել ավտոտրանսպորտային միջոցների շարժիչների աշխատանքը և անհրաժեշտության դեպքում կարգաբերել դրանք</p> <p>Փոշու արտանետումներ առաջացնող սարքավորումները կահավորել փոշեկլանիչ սարքերով</p> <p>Աշխատակազմը պետք է ունենա խմելու ջրի և զուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ:</p> <p>- Գործարանի տարածքում պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ:</p> <p>- Աշխատակազմը պետք է ապահովվի արտահագուստով և անձնական անվտանգության անհրաժեշտ միջոցներով:</p> <p>- Անվտանգության սարքավորումների օգտագործումը պետք է ուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի վերահսկողություն, հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:</p>	<p>Արտաքին զննումներ, տեխնոլոգիական մատյաններ</p> <p>Տեղում ստուգումներ</p> <p>Տեղում ստուգումներ, մատյանի գրառումների ուսումնասիրություն</p>	<p>Ճանապարհային ոստիկանություն</p> <p>Աշխատանքի և առողջապահական տեսչական մարմին</p> <p>Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին</p>



		- Արտադրամասի տարածքում պետք է լինեն հրդեհային անվտանգության պարագաներ՝ կրակմարիչներ, բահեր		
	Մթնոլորտային օդի աղտոտում Աղմուկ	Գործարանի արտադրական տարածքի և մերձակա տարածքների՝ սանիտարապաշտպանիչ գոտու, օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգ	Փոշու պարունակության չափումներ	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին

Ըստ նախնական գնահատումների մեղմող միջոցառումների և մոնիթորինգի ծախսերը կկազմեն՝ 1.2 մլն. դրամ/տարի: Գումարի չափը կճշտվի ՇՄԱԳ փուլում: